

## ՄԻՍԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ՝ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հայ ժողովրդի պատմութեան 17-18-րդ դարերը, մասնաւորապէս դրանց սահմանագիծն ընդգրկող ժամանակահատուածը, յատկորոշուած է մտաւոր զարթոնքի հետզհետէ հզօրացող շարժմամբ, ազգային գիտակցութեան աճով եւ անցեալի պատմամշակութային աւանդոյթների վերականգնման ակնյայտ միտումներով: Հանդէս եկած մշակութային գործիչները մի կողմից իրենց հայեացքը դարձնում էին դէպի դարերի խորքը, մեր նախնեաց ազգային արժէքները, միւս կողմից այն սեւեռում դէպի Եւրոպա, որտեղից դալիս էր նոր ժամանակների իմացական լոյսը: Վերջինիս նշանակութիւնն առանձնակի խորութեամբ գիտակցեց եւ մեր ազգային անկեալ կեանքի վերափոխմանն այն նպատակաւորեց Լուսանորդ վարդապետ Մխիթար Սեբաստացին (1676-1749):

Համեմատելով յիշեալ դարաշրջանը հինգերորդ դարի մեր իրականութեան հետ՝ յայտնաբերում ենք ոչ միայն ընդհանրութիւններ, այլեւ գրեթէ նոյնանման իրավիճակ: Քաղաքական անկախութիւնը կորցրած, Պարսկաստանի ու Թուրքիայի միջեւ անդամահատուած Հայաստանը թուլացել էր նաեւ ներքնապէս. միթազնել էր հոգեմտաւոր կեանքը, կրօնական միաբանութիւններից մնացել էր լոկ արտաքին ճշնութիւնը, մարել էր վանականութեան ոգին, իսկ համատարած անգրագիտութիւնը սպառնում էր վերածուելու համազգային աղէտի: Ժամանակի պատմիչ Առաքել Դաւրիժեցիին արեղանների մասին գրում էր, թէ «ոչ բնաւ ընթեռնուիմ գիրս, այլ էիմ փակեալ եւ լռեալ մատեանք, վասն զի էր խափանեալ ընթերցումն սուրբ Գրոց, որք էիմ արհամարհեալ յաչս նոցա»<sup>1</sup>: Այդ մատեանները բացելու եւ դրանք կրկին խօսեցնելու հանդէպ յարգանք, աւելին՝ սէր արթնացնել

<sup>1</sup> ԱՌԱՔԵԼ ԴԱՒՐԻԺԵՑԻ, «Պատմութիւն», էջմիածին, 1884, էջ 221:

էր պէտք: Նկատի ունենալով ժամանակի հոգեւորականութեան տիպական պատկերը՝ նշանաւոր բանասէր Յովհաննէս վրդ. Թորոսեանը գրում է. «Իւրաքանչիւր արեղայ, մէկդի դրած փիլոն եւ վեղար. կ'ուզէին պնասաիրութեամբ մրցիլ իշխանաց հետ. ո՛չ պահք եւ ո՛չ ծով ունէին, քոյր տարին ուտիք էր իրենց համար»<sup>2</sup>:

Եւ ինչպէս հինգերորդ դարի արշալոյսին յայտնուեց Մեւրոպ Մաշտոցը՝ ծնելով հայոց գրերն ու հիմքը դնելով ազգային դպրութեան, այնպէս էլ 17-18-րդ դարերի սահմանագծին ի յայտ եկաւ Մխիթար Սեբաստացին՝ վերածնելով այդ գրերը եւ հիմքը դնելով հայ կեանքում վերանորոգութեան շարժման: Ընդ որում, նա ոչ միայն մեզանում եւրոպականացման սկիզբը դրեց եւ գիտութեան լոյսը բերեց մեր կեանք, այլեւ, ինչպէս Հրաչեայ Աճառեանն է իրաւացիորէն նկատում, «մեր մէջ մտցուց գիտութեան սէրը»<sup>3</sup>: Հօր պատուար կանգնեցնելով իր ապրած դարաշրջանի կրօնական խառնաշփոթի ու տգիտութեան դէմ՝ 1700թ. ստեղծած իր միաբանութեամբ նա յստակ նշագծեց հայութեան մտաւոր զարգացման մայրուղին՝ ինքն առաջինն ընթանալով դրանով եւ իր ետեւից տանելով ազգասէր նուիրեալների մի ստուար բանակ: «Խորապէս ծանօթ լինելով իր ազգի հոգեբանութեանը, - գրում է Հ. Յարութիւն վրդ. Պատիկեանը, - (Մխիթար) կենտրոնացրեց իր ճիգերը՝ գլխաւորելու ընդհանուր լուսաւորութեան գործն ու հայ մտքի վերելքը: Այստե՛ղ է իր գործունէութեան բուն նպատակը՝ վերանորոգել հայ կրօնական ու մշակութային կեանքը»<sup>4</sup>: Դրան ուղղուած համապարփակ ծրագիրը կոչուած էր ի «լուսաւորութիւն ազգին մերոյ հայկազնոյ»՝ ունենալով «կրօնք, Գիտութիւն եւ կրթութիւն» նշանաբանը:

Ապագայ միաբանութեան հիմքը Արեւելքում՝ Պոլսում, դրնելով հանդերձ՝ Մխիթարի հայեացքն ամբողջովին ուղղուած էր դէպի Արեւմուտք, որտեղից ճառագող իմացութեան լոյսն այնքան անհրաժեշտ էր մեր նուազած ու դժգոյն կեանքին: Իր առաջին իսկ հրատարակութեամբ՝ Թոմա Գեմբացու «Յաղագս

<sup>2</sup> Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆ, Վարք Մխիթարայ Աբրայի Սեբաստացւոյ, Վենետիկ, 1932, էջ16-17:

<sup>3</sup> Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՃԱՆԱՇԵԱՆ, «Պատմութիւն արդի հայ գրականութեան», Վենետիկ, 1953, էջ 28:

<sup>4</sup> Հ. ՅԱՐՈՒԹԻԻՆ ՎՐԴ. ՊԶՏԻԿԵԱՆ, «Մխիթարի եւ Մխիթարեանների նըպատը հայ մշակոյթին», Երեւան, 2003, էջ 5:

համահետեւման Բրիտանի» (Կ. Պոլիս, 1700) նա ոչ միայն ընդհանուր հոգեւոր շահի մասին էր հոգ տանում, այլեւ գործնական օգուտ ակնկալում իր աշակերտների ու ապագայ միաբանների համար, զի «սա բաւական գիտութիւն է եւ խրատէ ըզմարդն լինել քարի կրօնաւոր»:

Շատ է գրուել եւ խօսուել Մխիթարեան միաբանութեան՝ Պոլսում անցկացրած անհանգիստ օրերի ու ամիսների մասին: Կրօնական եղբայրատեաց պայքարն ու հալածանքները, մայրաքաղաքից բացի նաեւ դաւաճներում մոլեգնող կրօնական հակառակութեան եւ անհանդուրժողականութեան ոգին հասել էին ահազանալի չափերի: «Ցաւալի ժամանակներ» է կոչում այդ չրջանը Յովհաննէս Թորոսեանը՝ ընդհանրացնելով Պոլսում տիրող վիճակը 17-18-րդ դարերի միջնամասում. «Այն տարիներուն մէջ Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ չքարճրացաւ մէկը՝ առանց տապալելու իւր նախորդը, ինչպէս ինքն ալ, իւր կարգին, կործանելու յաջորդէն: Այդ շփոթից օրերուն մէջ սկսան Հայք, ըստ զանազան դաւանութեան, այլեւայլ անուններ տալ իրարու՝ կաթոլիկ, ֆրանկ, հայ, հերձուածող եւ այլն»:

Ընդ որում, այս աղետաբեր ու ազգակործան վէճերի մէջ եկեղեցականներից բացի ներգրաւուած էին նաեւ աշխարհականք՝ գաղափար իսկ չունենալով խնդրի էութիւնից ու նրբութիւններից: Պոլսահայութեան փոխադարձ հալածանքների առաջն առնելու նպատակով Պոլսում Յրանսիայի դեսպանի նախաձեռնութեամբ 1701թ. հոկտեմբերի 26-ին խաղաղութեան հաստատման պայմանագիր է նախապատրաստուում, որը, սակայն, ինչ-ինչ պատճառներով չի ստորագրուում:

Արեւելքի երերուն եւ մշտատատան հողը, բնականաբար, չէր կարող խաղաղ կայան հանդիսանալ նորածիր միաբանութեան

<sup>5</sup> Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆ, նշ. աշխ. էջ 24.

<sup>6</sup> Ուշագրաւ է այստեղ մէջ բերել մի հատուած այդ ժամանակ Պոլսում Յրանսիայի դեսպան Ֆէրիոլի 3-ը սեպտեմբերի 1703 թուականի նամակից՝ ուղղուած առ Լիւզովիկոս 14-րդը. «Այն հալածանքը թուրք դեսպետին գործն է, որ երդուեալ բշնամին է փռանկաց: Ես մատուցի (հալածեալ) Հայոց այն ամէն ծառայութիւնները, որ կարող էի անել. նրանց գլխաւորներին աստատանի տեղ տուի: Այս կրակը սաստիկ բուռն է եւ համոզուած եմ, որ աղետալի հետեւանքներ պիտի ունենայ» (Mélanges Asiatiques, Bulletin, XIX, No. 2, Le prétendu masque de fer arménien, par M. Brosset, St. Pétersbourg, 1874, էջ 243.

համար, նպաստել նրա արդիւնաւէտ գործունէութեան իրականացմանը: Աւելին՝ ամէն ինչից զատ վտանգուած էր նաեւ միաբանների բուն Ֆիզիկական գոյութիւնը: Պոլսում իրենց անցկացրած օրերի մասին, երբ արտաքուստ կազմարարութեամբ էին զբաղուում, Մխիթարեան վանքի «Համառօտ ժամանակագրութեան» հեղինակն աւելացնում է, թէ վախենում էին տաճիկներից, որոնք եթէ իմանային հոգեւոր վարժարանի գոյութեան մասին, «Իսկայն եղծանէին զմեզ զամենեսին»<sup>7</sup>: Միւս կողմից ժամանակ երրորդ անգամ պատրիարքական աթոռ բարձրացած Եփրեմ Ղափանցին 18-րդ դարասկզբին՝ 1701ին, հրովարտակ է արձակում՝ ձերբակալելու պոլսահայերի կաթողիկէ մասի չորս գլխաւորներին, որոնց մէջ էր նաեւ Մխիթար Սեբաստացին: Վերահաս վրտանգից խոյս տալու համար Մխիթարն իր ինը աշակերտաց հետ պատասպարուում է Բերայի Վեղարաւորաց վանքում, որը կից էր Փրանսիայի դեսպանատանը եւ գտնուում էր նրա հովանաւորութեան ներքոյ:

Այս լարուած ու վտանգաւոր մթնոլորտը օր առաջ թողնելու միտքը չէր կարող չպատել Մխիթարին: Այլընտրանքը որեւէ խաղաղ ու ապահով անկիւն որոնելն էր, որը մի կողմից պիտի գտնուէր «ընդ տերութեամբ քրիստոնէից», միւս կողմից՝ շատ հեռու չպիտի լինէր Պոլսից ու հայոց բնաշխարհից. վերջինս Մխիթարեանների առաքելական գործունէութեան հիմնական ասպարէզն էր լինելու եւ, ի վերջոյ, այստեղից էր գալու նրանց աշակերտների մեծ մասը: Երբ գտնուեցին մարդիկ, ովքեր խորհուրդ տուեցին ապահովութեան համար քաշուել Լիբանանի լեռները, որտեղ կաթողիկէ մարոնիտները առանձին պատրիարք ու իշխան ունէին, Մխիթարն այն անընդունելի գտաւ. չէ՞ որ իր նպատակը ճգնաւորներ պատրաստելը չէր, այլ գիտակրօնական ու լուսաւորչական լայն գործունէութիւն ծաւալելը: Հաւաքելով իր աշակերտներին եւ նրանց աւջեւ պարգեւով իր գլխաւոր նըպատակը՝ նա ակնկալում էր հաւաքական որոշում, «Նւ որովհետեւ փորձը ցրցուց, թէ մայրաքաղաքիս եւ գաւառներուն մէջ, ուր չկայ անդորրութիւն եւ ապահովութիւն կենաց, անկարելի է միաբանութիւն մը հաստատել ու հոգեւոր ու գրաւոր կրթութեամբ պարապիլ, հարկ է ուրեմն, որ միաբան խորհրդով որոշենք, թէ աշխարհիս ո՞ր կողմը կրնանք երթալ՝ մեր այս մըտածութիւնն ի գլուխ հանելու համար»:

<sup>7</sup> «Համառօտ ժամանակագրութիւն», էջ 3:

Ահա տազնապալի ու խռովայոյզ այդ օրերին էր, որ Պոլսում վենետիկոյ դեսպան Լորենցոյ Սորանցոն իր օգնութիւնը եւ ամենակարեւորը՝ իր տէրութեան հովանաւորութիւնն է առաջարկում հայ կրօնաւորներին: Մի քանի տարի անց, իսկ աւելի որոշակի՝ 1705թ. յունիսի 16-ին, Հռոմի Կղեմէս ԺԱ. քահանայապետին գրած իր Հաւատոյ դաւանութեան գրութեան մէջ Մխիթար Սեբաստացին երախտագիտութեամբ է յիշում «վեկեցիոյ պաշաքօր», այսինքն՝ վենետիկի դեսպան, բարձրագունեղ Լորենցոյ Սորանցոյին՝ նշելով, որ վերջինս «փրկեաց զմեզ յամենայնից անշաց մերոյ եւ ժողովեալ զմեզ ի պալատն իւր, պահեաց զաւուրս բազումս՝ հոգալով զամենայն պիտոյս մեր, եւ յետ այլոց բազմաց բարեբարութեանց՝ յաւել եւս զայս, զի առաքեաց զրնաւս գրով իւրով ի Մօռա»:

Ելնելով, սակայն, Արեւելքից, մասնաւորապէս Պոլսից ունեցած մերձաւորութեան հանգամանքից՝ Մխիթարը նախապատուութիւնը տալիս է վենետիկի Հասարակապետութեանը հարկատու Պեղողոնէս կամ Մոռէս կոչուող երկրամասին, որը զըտնըւում էր Յունաստանի հարաւում: Հայ վաճառականներից նա բազմիցս էր լսել այդ տարածքի պարարտութեան եւ արգաւանդութեան մասին, որ խոստանում էր բաւարար պայմաններ ապահովել միաբանութեանս գոյութեան համար: Հարկ է ընդգծել, որ Մխիթարի կողմից Ներոպային նախապատուութիւն տալը պայմանաւորուած էր ոչ այնքան դաւանական նկատառումներով, որքան թէ՛ Պօլսում, թէ՛ Հայաստանում այդ նուազագոյն պայմանների չգոյութեամբ:

Իր հետ վերցնելով համապատասխան վկայագիր դեսպան Սորանցոյից՝ 1702թ. սեպտեմբերին Մխիթարը ծպտեալ թողնում է Պոլիսը: Ի դէպ, վերջինս լինելով Մխիթարեան միաբանութեան ծննդավայրը՝ միաժամանակ հանդիսացաւ օրրանն ամէն տեսակի հալածանքների ու յարձակումների՝ արդիւնք մերթ թիւրիմացութեան, մերթ էլ՝ սղխտութեան կամ նախանձի: Մոռէս է հասնում 1703-ի փետրուարին: Իբրեւ բնակութեան յարմարագոյն վայր ընտրում է Մեթոն բերդաքաղաքը, որի բնակիչներն առաւելապէս յոյներ էին, իսկ կառավարիչները՝ վենետիկցիք: Տեղի «Քննիչք» կոչուած իշխաններին իր աղերսագրի հետ Մխիթարը ներկայացնում է նաեւ վենետիկոյ դեսպանի վկայագիրը, որի գլխումաց հայ կրօնաւորներին գործելու արտօնութեան հետ միաժամանակ շնորհւում է ընդարձակ տեղ՝ վանք եւ եկեղեցի կառուցելու համար:

Մոռէա երկրամասը դարեր շարունակ փոխնիփոխ գտնուել է մերթ թուրքական, մերթ վենետիկեան տիրապետութեան ներքոյ: Վերջին անգամ այն վենետիկցիներին էր անցել 17-րդ դարավերջին՝ ձեռամբ Փրանկիսկոս Մորոզինի (1684-1688թթ.) ծովակալի: Թեւեալոր առիւծի պաշտպանութիւնը ապահովութիւն էր խոստանում նորաստեղծ միաբանութեան 16 անդամներին՝ առժամանակ նրանց տալով հանդիստ գործելու եւ ուշադրութիւնը ներքին կազմակերպական ու ուսումնական հարցերի վրայ սեւեռելու հնարաւորութիւն: Կապը Դոժերի հռչակաւոր ու գեղապան՝ քաղաքի հետ այժմ այլեւս աւելի սերտ ու մշտական էր լինելու: Այսպէս. վերոյիշեալ Հաւատոյ դաւանութեան գիրն ու այլ համանման փաստաթղթերը Հռոմի պապին յանձնելու նպատակով Մխիթարի երկու աշակերտները 1705ի սեպտեմբերի վերջին ուղեւորուած են նախ եւ առաջ Վենետիկ՝ արժանանալով ջերմ ընդունելութեան: Մէկ օր մնալուց յետոյ նրանք ուղղուած են Հռոմ, այցելում այդտեղ Վենետիկի դեսպանին, որը նրանց օգտակար է լինում իրենց բոլոր ձեռնարկումներում: Մասնաւորապէս միաբանութեան երկու անդամներին նա ներկայացնում է Հաւատասփիւռ ժողովի նախագահ Ծիրանաւորին եւ Սրբազան քահանայապետին, որը «շատ սիրով ընդունեցաւ զիրենց, մանաւանդ երբ դեսպանը լիուլի գովեստներ խօսեցաւ միաբանութեան եւ Հիմնադրից վրայ»<sup>8</sup>: Մէթոնում գտնուելու օրերին Մխիթարը ծանօթացաւ ու բարեկամութիւն հաստատեց Վենետիկեան տէրութեան շատ նշանաւոր անձանց հետ, ովքեր հետագայում պիտի մեծապէս նպաստէին միաբանութեան վերջնական հաստատմանը Վենետիկում: Նրանց մէջ էին Մոռէայի ընդհանուր իշխան Անջելոյ էմոն, որ Վենետիկի երեւելի սեպուհներէից էր, Վենետիկեան պետութեան բոլոր կղզիների եւ նաւերի ընդհանուր հրամանատար ու սպարապետ Սեբաստիանոս Մոչենիգոն, որը հետագայում՝ 1722թ. օգոստոսի 24-ին, դարձաւ Վենետիկի ՃժԲ դուքսը, Միաբանութեան բարեկամ Անտոն Նանին, Կորնթոսի արքեպիսկոպոս Կարլինին, որի իրաւասութեան ներքոյ էր բովանդակ Մոռէան եւ որը մօտիկից ճանաչելով Մխիթարին ու նրա միաբանութեանը՝ հետագայում իր վկայութիւններով օգտակար եղաւ զանազան յարձակումներից նրանց պաշտպանելու հարցում:

<sup>8</sup> Հ. ՅՈՎՃԱՆՆԵՍ ԹՈՐՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 152:

Չնայած Մոռէան, ի մասնաւորի՝ Մեթոն բերդաքաղաքը, յարմար էր ապրուստի միջոցների հայթայթման եւ կենցաղի կազմակերպման տեսակէտից, այն այնքան էլ նպաստաւոր չէր գիտակրթական գործունէութեամբ զբաղուելու համար. չկային ո՛չ գրատուն, ո՛չ վարժարան, ո՛չ տպարան, ո՛չ էլ նմանատիպ այլ հաստատութիւններ: Նշանաւոր հայագէտ, Մխիթարեան միաբան Սահակ վրդ. Ճեմճեմեանը, անդրադառնալով միաբանութեան մեթոնեան շրջանին եւ յենուելով երանաշնորհ հիմնադրի նամակների ու Մխիթարեան մայրավանքի դիւանի փաստաթղթերի վրայ, գրում է. «Մեթոննի մէջ Մխիթար Արքայապետ տպարան չէ հիմնած, բայց, անտարակոյս, ունեցած է անոր ծրագիրը»<sup>9</sup>: Իրողութիւնն այն է, սակայն, որ գործնականում դա չի յաջողուել եւ եթէ նոյնիսկ պղնձեայ տառեր է ձեռք բերել, դրանք այլ ծրրագրերի հետ թաղուել են Մեթոնի փլատակների տակ:

Ճիշտ է, թուրքական յարձակման վերահաս վտանգն ու բուն յարձակումը տարիներ անց ստիպեցին Մխիթարին ու նրա միաբաններին թողնելու այս սակաւամարդ ու մեկուսի բերդաքաղաքը, բայց, մեր խորին համոզմամբ, ուչ թէ շուտ գալու էր այդ օրը եւ կազմաւորման ու հասունացման որոշակի շրջան անցնելուց յետոյ Մխիթարն ինքն էր իր կամօք առաջնորդելու միաբանութեանը դէպի աւելի նպաստաւոր վայր, որտեղ կարողանալու էր դիւրապէս իրականացնել իր հրատարակչական առաքելութիւնը: Մխիթարեան միաբանութեան համար մեթոնեան ողջ շրջանը (1703-1715թթ.), որ ամուլ էր յատկապէս զբահրատարակչական առումով, կարելի է կոչել Վենետիկի համար նախապատրաստական կամ ուղղակի՝ նախավենետիկեան շրջան: Այդ 12 տարիները Մխիթարի կենսագիր Յովհաննէս Թորոսեանը պատկերաւոր բնորոշում է որպէս «գրական երկանց եւ յղութեան տարիներ»<sup>10</sup>:

Մոռէայի վրայ թուրքական զօրաբանակների յարձակման եւ պատերազմական գործողութիւնների լուրն առնելով՝ Մխիթարն իր աշակերտների հետ միաբան որոշում է թողնել Մեթոնը եւ 1715թ. մարտի 1-ին ուղղութիւն է վերցնում դէպի Վենետիկ՝ բազմամարդ, բազմազգ, բարեպաշտ ու անառիկ այդ հարուստ քաղաքը, որը «երկրորդ հայրենիք» էր դառնալու Մխիթարի եւ

<sup>9</sup> Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ, «Մխիթար Արքայապետ հրատարակչական առաքելութիւնը», Վենետիկ, 1980, էջ 14:  
<sup>10</sup> ՏԵՆ Յ. ԹՈՐՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 197:

Մխիթարեան սերունդների համար՝ ասպնջականութեամբ դիմաւորելով եւ նպաստաւոր պայմաններ ստեղծելով վտարանդի հայ կրօնաւորների համար:

Արեւմուտքում լինելով արեւելեան նկարագիր ունեցող քաղաք՝ Վենետիկը դարաւոր սերտ կապերով էր միացած հայերիս հետ, որոնք այստեղ ընդունուած էին որպէս «նախասիրուած ազգ»: Հայ-վենետ երթեւեկի եւ ընդհանրապէս առնչութիւններին ժամանակին հանդամանօրէն անդրադարձել է մեծավաստակ հայագէտ, Մխիթարեան հայր Ղեւոնդ Ալիշանը<sup>11</sup>: Ըստ նրա, այդ կապերը կանոնաւոր բնոյթ են ստացել դեռեւս Ռուբինեան հարստութեան օրօք, որի առանձնաշնորհեալ դաշնակիցն էր Վենետիկը. «Հայոց Ռուբինեան հռչակեալ հարստութիւնը դար եւ կէս քոթակից եւ դաշնակից եղած է ընդ Հասարակապետութեան Վենետիկոյ. ընդարձակելով ասոր թեւաւոր առիւծուն թռչանքը եւ տալով ազատութիւն՝ Սիսուանայ մէջ տուն, դատարան, եկեղեցի եւ փնդուկ հաստատելու եւ անոր անդադար ծովակրկիտ եւ վաճառախնդիր, անկուշտ նաւերուն՝ ապահով եւ ոսկելից նաւահանգիստ մի, Այա՛ս. հայկականն Վենետիկ»<sup>12</sup>:

Փոխադարձաբար 13-րդ դարում հայերն են Վենետիկում ստանում իրենց առաջին բնակարանը՝ Հայոց տունը, որը 1253թ. յուլիսի 5-ի կտակով մեր ազգայիններին է նուիրում Ծիանի դքսական նշանաւոր ընտանիքի անդամներից Մարկոսը՝ Պետրոս դոժի որդին: Դրանից քիչ աւելի վաղ Մարկոսի հօրեղբայրը՝ Սեբաստիանոս Ծիանի դոժը, իր մի քանի կալուածքների ու տների տարեկան հասոյթը շնորհել էր վենետաբնակ հայերին, որոնց մեծ մասը վաճառականներ էին: Ընդհանրապէս 13-րդ դարը նշանաւորում է Վենետիկի ծաղկման սկիզբը, երբ «նրան յաջողուեց օգտուել իսպակրաց չորրորդ արշաւանքից, որի արդիւնքում վենետիկն ամրացաւ եւ մտաւ իր քարգաւանման երկարատեւ շրջանը, քանի որ նրան անցաւ Եւրոպայի եւ Արեւելի միջեւ առեւտրի գերիշխանութիւնը»<sup>13</sup>:

<sup>11</sup> Հ. ՂԵՒՈՆԴ Ա.ԼԻՇԱՆ, «Հայ-վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետացի ժԳ-ի եւ ի ԺԵ-Ձ դարս», Վենետիկ, 1896. տե՛ս նաեւ Հ. ԼԵՒՈՆ ԶԷՔԻՆԵԱՆԵ ԵՒ Հ. ՏԱՃԱՏ ԵԱՐՏՁՄԵԱՆ, «Վենետիկ եւ հայերը», Վենետիկ, 1990:

<sup>12</sup> Հ. ՂԵՒՈՆԴ Ա.ԼԻՇԱՆ, *և. ղ. աշխ.*, էջ է՛:

<sup>13</sup> Ե. ՖԵՈՐՈՂՈՎԱ, «Իտալիոյ նշանաւոր քաղաքները», (ռուս.), Մոսկուա, 1985, էջ 268:

«Հայ-վենետ» աշխատութեան մէջ Ալիշանի բերած բազմաթիւ դիւանային փաստաթղթերի ու վաւերաթղթերի մէջ մեր ուշադրութիւնը գրաւեց յատկապէս այս մէկը՝ հայոց մեծամեծերի Ընծայական գիրը<sup>14</sup>, որն իր հետ բերել էր Ստեփանոս Ե. Սալմաստեցի հայոց կաթողիկոսը՝ 1550թ. այցելելով Վենետիկ: Այն տիպական է քաղաքիս հանդէպ արեւելեան քրիստոնէաների, մասնաւորապէս հայերիս ունեցած մտայնութեան եւ վերաբերմունքի արտացոլման առումով: Այո՛, Վենետիկն աւանդաբար միշտ էլ ընկալուել է որպէս «ամենայն քրիստոնէից եւ ամենայն մոլորելոց նաւահանգիստ եւ ապահով օթեւան» կամ «քանալի ու փականք եւ պաշտպան բովանդակ քրիստոնէութեան»: Աւելին. Ընծայական գրի հեղինակները քաղաքի Դուքսին ներկայացնելով իրենց «խնդն» վիճակը՝ «ի ներքոյ խիստ տառապանաց այլադեմից», ուղղակի գրում են. «Կու սպասեմք ձեր գալուն, ինչպէս սուրբ նախահարքն սպասէին փրկչին Քրիստոսի»:

Վենետիկը, սակայն, հայ ժողովրդի պատմութեան մէջ հիմնաւորապէս մոտաք գործեց եւ հայ մշակոյթի «մայրաքաղաքներից» մէկը դարձաւ նախ եւ առաջ շնորհիւ հայ տպագրութեան խանձարուրը լինելու հանգամանքի: Գոտտենբերգի գիւտից ընդամէնը 60 տարի անց՝ 1512-ին, այստեղ լոյս տեսաւ հայերէն առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: Դարակազմիկ այս իրադարձութիւնը մեծապէս պայմանաւորեց հայ մտաւոր մշակոյթի զարգացման հետագայ ողջ ընթացքը: Դրանից շուրջ երկու հարիւրամեակ անց այստեղ իր բուռն գործունէութիւնը ծաւալել սկսած Մխիթարեան միաբանութիւնը եւս նպաստեց, որ Վենետիկը վերածուի խորհրդանիշի «հայ իմբնութեան եւ երոպական քաղաքակրթութեան իւրայատուկ արժեքներու ձուլման»<sup>15</sup>:

Քաղաքը միջին դարերում յայտնի էր իր տպագրատներով եւ տպագրիչներով: Այստեղ մինչեւ 15-րդ դարի աւարտը տպագրիչների թիւը հասել էր 200-ի, որոնց մէջ տեղացիներից բացի ներգրաւուած էին նաեւ գերմանացիք, ֆրանսիացիք, ֆլամանդացիներ եւ հոլանդացիներ: Համեմատութեան համար նշենք, որ նոյն ժամանակաշրջանում տպագրիչների թիւը Հռոմում 37 էր, Ֆլորենցիայում՝ 22, Բոլոնիայում՝ 42, Միլանում, Փարիզում

<sup>14</sup> Այն ամբողջութեամբ կարելի է ընթերցել Ղեւոնդ Ալիշանի նշեալ աշխատութեան մէջ (էջ 330):

<sup>15</sup> Հայր Լեւոն Զեփեւեան եւ Հայր ՏԱՃԱՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ, նշ. աշխ., էջ 14:

ու Լիոնում միասին վերցրած 150 եւ այլն<sup>16</sup>: Նշելով, որ «Այդ փաղափր (Վենետիկը-Լ.Լ.) 16-րդ դարի սկզբներին իր շուրջ 250 տպարաններով դարձել էր Իտալիայի ու ամբողջ Եւրոպայի ամենատպարանաշատ փաղափր», անուանի լեզուաբան ու մատենագէտ Ռաֆայէլ Իշխանեանն այն բացատրում է հիմնականում Վենետիկի Հանրապետութիւնում կաթողիկական գրաքննութեան առաւել մեղմութեամբ<sup>17</sup>:

Քանակից զատ տպաւորիչ էր նաեւ վենետիկեան հրատարակութիւնների որակը. դրանք աչքի էին ընկնում տպագրական բուհատի նրբազեղութեամբ եւ գեղարուեստական ճաշակով: Վենետիկը նկատի ունենալով Հ. Բարսեղ Սարգիսեանն իր նշանաւոր աշխատութեան մէջ նկատում է. «Այդ փաղափր միայն Իտալիոյ եւ Արեւմուտքի համար չէ, որ մտաւորական սնունդ եւ լոյս կը տարածէր, այլ ե՛լ հեռաւոր Արեւելքին, որուն հետ սերտիւ կապուած էր իր տիրապետող գորութեամբն ու վաճառաշահութեամբը: Այստեղ սկսան երբեմն եւ գարգացան սլաւոնական, յոյն, հայ, հրեայ եւ արաբական տպագրութիւնները»<sup>18</sup>:

Մխիթարի՝ Վենետիկ հասած ժամանակ՝ 1715-ին, հայկական գրքերի հրատարակման գործում առաջատարը Անտոն Պորթոլիի տպարանն էր, որը 1695-ից սկսեալ մինչեւ 1729 թուականը մենաշնորհ ունէր հայկական գրահրատարակչութեան մարզում: Այստեղ էլ լոյս է տեսնում Մխիթար Աբբասօր վենետիկեան հրատարակութիւնների մեծ մասը՝ բաղդատելի եւ մրցելի ժամանակի եւրոպական հրատարակութիւնների հետ: Դժուար է, ի հարկէ, չհամաձայնել Սահակ Ճեմճեմեանի այն մտքի հետ, որ նա արտայայտում է Մխիթարի՝ Մեթոնից վենետիկ անցնելու կապակցութեամբ. «Անկարելի է, որ Մխիթար հոգեպէս հրճուած չըլլայ՝ մտածելով փաղափր գտնուող տպարաններու եւ իր գրական առաքելութեան մասին»<sup>19</sup>: Այդ հրճուանքն առաւել քան

<sup>16</sup> Այս տուեանները քաղել ենք Գարեգին Զարհանյանի «Պատմութիւն հայկական տպագրութեան. սկզբնաւորութենէն մինչ առ մեզ», Վենետիկ, 1895, էջ 13-14:

<sup>17</sup> Ռ. ԻՇԽԱՆԵԱՆ, «Յակոբ Մեղպարտ», Եր., 1982, էջ 22:

<sup>18</sup> Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Երկհարիւրամեայ գրականակն գործուցումներու եւ նշանաւոր գործիչներ վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905, էջ 9:

<sup>19</sup> ՏԵՍ Հ. ՍԱՀԱԿ Վ. ՃԵՄՃԵՄԵԱՆ, նշ. աշխ., էջ 19:

բնական ու հասկանալի է դառնում, երբ ծանոթանում ես Մեթոնից առ Վենետիկի իւր ազգայինները Մխիթարի գրած նամակներին: Այսպէս. ի պատասխան Նորատունկ Չաքարեանի ուղարկած վենետիկեան տպարաններում գործածուող գրերի նմոշներին, ինչպէս նաեւ հոգեւոր գրքեր տպագրելու նրա յայտնած առաջարկի ու պատրաստակամութեան՝ Մխիթարը 12-ը օգոստոսի 1714 թուակիր նամակում պատասխանում է. «Գրեմք վասն պասալյին, զի բարութ եւ օգտակար խորհուրդ է այդ, գոր գրեալ էիր առ մեզ եւ յոյժ շնորհակալ եմք. զի մեզ եւ բոլոր ազգին է մեծագոյն լուսաւորութիւն եւ է կարի յոյժ բաղձալի մերոյ սրտի, զի ի վաղուց հետէ ցանկացեալ եմք եւ տեւչամք այնմ գործոյ» (ընդգծումը մերն է - Լ.Լ.): Նոյն տեղում նա ակնարկում է լաւագոյն ժամանակների մասին «առ ի յառաջ ածել եւ գայս գործ (տպագրութեան), որպէսզի եւ ըստ այսմ հասանիցեմք մերոց բաղձանաց»: Երկար տարիների այս տեւչանքն ու բաղձանքը հնարաւոր է լինում իրագործել միայն տարիներ անց՝ Վենետիկում, որտեղ թափ առաւ նրա հրատարակչական բուն առաքելութիւնը, որ «պիտի գար հսկայօրէն նոխացնել հայ մտքի հոգեւոր ու մշակութային գանձարանը<sup>20</sup>»: Դեռեւս Մեթոնում սկսած գործը՝ Ալբերտ Մեծի «Համառոտութիւն աստուածաբանութեան» դասագրքի սրբագրութիւնն ու լատին բնագրի հետ համեմատութիւնը աւարտեց Վենետիկում, որտեղ հասնելուց հազիւ երկու ամիս անց՝ 1715-ի յուլիսին, հրատարակեց այն:

Ընդհանուր առմամբ Ազրիականի խաղաղ ափերին Մխիթարը լոյս աշխարհ հանեց շուրջ 50 հատորներ (14-ը՝ ինքնագիր) եւ դրանց մէջ «Աստուածաշունչ»ը (1733), «Մատթէի Աւետարանին մեկնութիւնը» (1737) ու այդ ամէնի փառապսակը հանդիսացող «Հայկազեան բառարանը» (1749): Մեծանուն հայագէտ Հ. Պօղոս վրդ. Անանեանն այդ հրատարակութիւնները բնորոշում է որպէս գոհարներ «թէ՛ արուեստի տեսակետով, թէ՛ բովանդակութեամբ, թէ՛ ներքին հոգեշունչ օծութեամբ եւ թէ՛ հրատարակչական քիւրագգի գաղանիքներով»<sup>21</sup>:

Չմոռանանք, ի հարկէ, որ իր միաբանութեան հաստատման առաջին երկու տարիները եւս բեղմնաւոր էին հրատարակչական տեսակէտից, երբ ընդամէնը 8 ամսում 1700ի հոկտեմբեր-1701ի

<sup>20</sup> ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԱՆԱՆԵԱՆ, Առաջաբան Սահակ Ճեմճեմեանի «Մխիթար Արքայի հրատարակչական առաքելութիւնը» գրքի, Վենետիկ, 1980:

<sup>21</sup> Անդ.

յունիս, Պոլսում Մխիթարը լոյս ընծայեց 4 հոգեշունչ գրքեր: Տասը եւ աւելի տարիների հարկադիր ընդմիջումից յետոյ այդ կրակը նոր թափով բորբոքուեց հէնց Վենետիկում, երբ ստեղծուեցին տպագրական բաւարար հնարաւորութիւններ:

Արժէ յիշատակել նաեւ Մխիթարեան վանքի ժամանակագիր Մատթէոս Եւզոկիացու խորհրդածութիւնները Մեթոնից Վենետիկ տեղափոխուելու կապակցութեամբ, որտեղ այդ քայլի մէջ նախախնամութեան դերը տեսնելով հանդերձ՝ թուարկում է Վենետիկի առաւելութիւնները՝ ի շարս որոնց «մեծամեծ բարիք մեզ աստիճանաբար եկին, որոց ոչ էր հնար մեզ հանդիպել անդէն ի Պետրոսպոլսիս, եւ որքան մերում եղան, որոց աջողութիւնն ոչ հանդիպէր, եթէ ոչ մեզ յերկիրս յայս փոխիլ վիճակէր»<sup>22</sup>:

Մխիթարի՝ Վենետիկում հաստատուելու հիմնական պատճառներից էր, ի հարկէ, նաեւ տեղացիների մէջ հաւատարիմ ու ազդեցիկ ծանօթներ եւ բարեկամներ ունենալը: Առաջին հերթին յիշենք դեռեւս Պոլսում Մխիթարին իր օգնութեան ձեռքը պարգած Վենետիկի դեսպան Լորենցոյ Սորանցոյին, որն, ըստ Մխիթարի 16-ը յունիսի 1705 թուակիր Հաւատոյ դաւանութեան գրքի, արդէն դարձել էր «բուրկուրաթօր Սամարգոյի»<sup>23</sup>: Նկատենք, որ Սբ. Մարկոսի «պրոկուրատորի», այսինքն՝ հոգաբարձուի կամ գործակալի պաշտօնը ամենաբարձր աստիճանն էր դոժից կամ դքսից յետոյ, եւ նրանց թիւը Վենետիկի ողջ հանրապետութիւնում այն օրերին ընդամէնը 12-ն էր:

Վենետիկ հասնելուն պէս, շնորհիւ դեռեւս Մեթոնից իրեն քաջ ծանօթ հարուստ ու ազդեցիկ սեպուհներին եւ իշխաններին, Մխիթարն ու իր աշակերտները հնարաւորութիւն են ստանում աղօթելու եւ պատարագելու տեղի եկեղեցիներում: Բայց մեր միաբաններն իրենց ծրագիրն իրականացնելու համար կարիքն ունէին առանձին մենաստանի ու վանատան: Այդ նպատակով Մխիթար Աբբան դիմում է իր բոլոր ծանօթ-բարեկամներին՝ Նանիին, Էմոյին, Սեբաստիանոս Մոչենիոյցոյին, որոնց միջոցով ծանօթանում է նաեւ ուրիշ պաշտօնաւորների հետ: Մոռէպլի իշխանների տուած վկայագրերը<sup>24</sup> ձեռքին՝ նա շատ մեծամեծերի ա-

<sup>22</sup> Հ. ՄԱՏՅԷՆՈՍ ԵՒԴՈՎԻԱՑԻ, «Ժամանակագրութիւն վանաց», էջ 208:

<sup>23</sup> Procuratore di San Marco.

<sup>24</sup> Այդ վկայագրերի մասին խօսելիս Մտ. Ազոնցը հետաքրքիր դիտում է անում նշելով, որ դրանք «ցուցանէին գարդիւս եւ գիրաւունք (ընդգծումը մերն է-Լ.Լ.) միաբանութեան՝ ընդունելի լինելոյ ի քաղաքի աստ» (Տէ՛ս Ա-

Ջակցութիւնն է խնդրում, Վենետիկում հաստատուելու «դիտաւորութեան» մասին ծանուցում Հաւատաստիւ ժողովի ծիրանաւոր նախագահին ու քաղաքի պատրիարքին, քանիցս լինում Դոժերի պալատում, մինչեւ որ Վենետիկոյ ծերակոյտը Մխիթարի միաբանութեանը 1717թ. օգոստոսի 26-ին շնորհում է Սուրբ Ղազար կղզին «իբր մշտնջեմաւոր բնակութիւն»:

Վերջապէս, Վենետիկն իբրեւ գործունէութեան վերջնական հանգրուան ընտրելու հարցում վճռական նշանակութիւն ունեցաւ վաճառաչահ այդ քաղաքում հայկական փոքրիկ, բայց գործուն ու կազմակերպուած համայնքի գոյութիւնը՝ բաղկացած հարուստ ու ձեռնհաս հայ վաճառականներէից, նշանաւոր տպագրիչներէից ու հոգեւորականներէից: Յիշենք, որ արդէն 16-րդ դարակէսին այնքան էր բազմացել մերազգեաց թիւն այդ քաղաքում, որ 1575-ին նրանք յատուկ ժողով են գումարել՝ ընդունելով «Սահմանադրութիւն ազգիս Հայոց»: Դրանից իմանում ենք, որ Սբ. Յովիանոս թաղում գտնուող Հայոց տան մէջ խորան են շինել տուել՝ սահմանելով, որ «Էջմիածնի կաթողիկոսութեան արքունիքի քահանայ մը գայ եւ աստուածային պաշտամունքը կատարէ»<sup>25</sup>: Այս տան հիմքի վրայ յանուն Երեւման Խաչի վեր բարձրացած մատուռը, շնորհիւ հայ վաճառականաց շուայլ նուիրատուութիւններէ, տարիներ անց վերածուած է չափաւոր մեծութեամբ Սբ. Խաչ հայկական եկեղեցու, որի շինարարութիւնն աւարտուած է 1688թ. դեկտեմբերին: Մխիթարի՝ Վենետիկ տեղափոխուած ժամանակ այս եկեղեցու հոգեւոր հովիւն էր Խաչատուր վրդ. Էրզրումեցին, «որուն ըստ բազում գլխոց երախտապարտ է Մխիթարայ ուխտը»<sup>26</sup>:

Աբբահայրը հայ մշակոյթի այս երեւելի գործչին գիտէր դեռեւս Պոլսից, երբ 1697-ի ապրիլին հէնց նրան էր առաջինը յայտնել վանական միաբանութիւն ստեղծելու իր մտադրութեան մասին՝ առաջարկելով նոյնիսկ կանգնել գործի գլուխ եւ իրեն վերապահելով սոսկ «գործակցի եւ սպասաւորի» դերը: Դրանից յետոյ նրանց կապը երբեք չընդհատուեց. բաժանութեան տարի-

ՏԵՓԱՆՆՈՍ Ա.ԳՈՆՅ, «Պատմութիւն կեանց եւ վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացոյ Բարունապետի եւ Աբրայի», Վենետիկ, 1810, էջ 210), այսինքն՝ այդ թղթերը վկայում էին ոչ միայն Մխիթարեան միաբանութեան հանդէս բերած արդիւնքների, այլեւ Վենետիկում հաստատուելու օրինական իրաւունքի մասին:

<sup>25</sup> Տէ'ս Ղ. Ա.ԼԻՇԱՆ, նշ. աշխ., էջ 384:

<sup>26</sup> Տէ'ս Հ. ՅՈՎՀ. Վ. ԹՈՐՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 263:

ներին այն շարունակուեց նամակազրույթեամբ՝ մինչեւ որ ճակատագիրը նրանց կրկին կը միացնէր Ադրիատիկի ափերին: 26 Հայ մշակոյթի այս 2 երախտաւորների սրտառուչ բարեկամութեան մասին առաւել մանրամասն տե՛ս ԿԱՐԴԻՆԱԼ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ., «Մխիթար Արքահայր եւ Խաչատուր Վարդապետ» («Բազմավէպ», 1949 յուլիս-դեկտեմբեր, էջ 30-37), նաեւ ԼԵՒՈՆ ԼԱՃԻԿԵԱՆ, «Մխիթար Սերբաստացի եւ Խաչատուր Էրզրումեցի. էջեր անճակամ-ստեղծագործական մեծ քարեկամութեան» («Բազմավէպ, 2001, էջ 156-165):

Խոյս տալով դաւանաբանական կռիւներից՝ Հռոմի Ուրբանեան վարժարանի այս շրջանաւարտն ու հմուտ աստուածաբանը դեռ 1707-ից էր տեղափոխուել Վենետիկ՝ դառնալով վենետուհայոց հոգեւոր առաջնորդը: Վայելելով Հռոմի վստահութիւնը եւ անուարկելի հեղինակութիւն լինելով Սուրբ ժողովում՝ նա անգնահատելի դեր կատարեց Մխիթարեան միաբանութեանը տարատեսակ չարախօսութիւններից ու զրպարտութիւններից պաշտպանելու հարցում՝ միաժամանակ նպաստելով դրա կայացմանն ու ամրապնդմանը: Ժամանակի եւրոպական լուսաւորեալ կենտրոններից հէնց Վենետիկին նախապատուութիւն տալու հարցում նրա ունեցած առաջնային դերին մենք անդրադարձել ենք տարիներ առաջ մեր գրած մի յօդուածում<sup>27</sup>, որտեղ բերուած տուեալները գալիս են վկայելու անհերքելի այն իրողութիւնը, որ «ժամանակին Խաչատուր Էրզրումեցու՝ վեներաբարձ աստուծոյ եւ ստեղծագործելու հանգամանքն այլ նախադրեալների թուով վեներաբարձ էր Ե կատարել Ադրիական ծովի այս չքնաղ ափը որպէս հայոց մտաւոր լուսաւորութեան կենտրոնի վերածելու հարցում»<sup>28</sup>:

Ահա սրանք էին, ըստ մեզ, այն հիմնական պատճառները, ի հետեւանա որոնց Մխիթարեան միաբանութիւնը ոչ միայն վերջնականապէս հաստատուեց Վենետիկում, ի մասնաւորի՝ Սուրբ Ղազար կղզում, այլեւ արդէն երեք դար, ինչպէս բանաստեղծն է պատկերաւոր գրում, «Տֆնում է հայրենիքից դուրս՝ հայրենաց համար» (Յովհաննէս Շիրազ):

ԼԵՒՈՆ ԼԱՃԻԿԵԱՆ

<sup>27</sup> Տե՛ս ԼԵՒՈՆ ԼԱՃԻԿԵԱՆ, «Խաչատուր վրդ. Էրզրումեցու դերը Մխիթարեան միաբանութեան՝ վեներաբարձ հաստատուելու հարցում», («Բազմավէպ», 1995, էջ 332-342):

<sup>28</sup> Անդ, էջ 342:

## Main Reasons of the Settlement of Mekhitarian Congregation in Venice

LEVON LACHIKYAN

(summary)

The establishment of the Congregation in Constantinople in 1700, by Mekhitar Sebastatsi, was a distinct outline of the mainstream of the intellectual development of Armenians. He was the first in this mainstream, followed by a considerable number of patriotic devotees.

Many written documentations has been found, talking about the heavy circumstances under which the Congregation was obliged to leave Constantinople. But in none of those documents was mentioned why the Congregation moved to Venice and gave priority to this city.

This article, based on Mekhitar's letters, Mekhitarian chronicles, and archival documents, as well as the works of the Abbate's biographers, tries to collect and sum up all those reasons in the consequence of which this peaceful bank of the Adriatic Sea became the final haven for the activities of Mekhitarian Congregation.

It was during those troublous and rebellious days of stay in Constantinople, when Lorentso Sorantso, the Ambassador of Venice, offered his assistance, and more importantly, the support of his country to the Armenian ecclesiastics. However, owing to the alliance with the East, Mekhitar gave preference to the country which was under the jurisdiction of the Venice Republic: Morea (Northern Greece). On the other hand, the circumstances in this country, namely in Meton Fortress, were not favourable to carry out scientific and educational activities, as well as publishing. We believe that, irrespective of the danger of the Turkish attack, there would come a day when Mekhitar would lead his disciples to a more favourable place for their activities.

Nevertheless, in 1715 the Turkish attack forced the exiled monks, without any hesitation, to leave for Venice, where they already had acquaintances both within the locals and their relatives. While making the decision to settle in Venice, Mekhitar could not but take into account the existence of the Armenian community which had developed efficient and organized activities in this merchant city. We believe that another fact of high importance was the presence of Khachatur Erzurumetsi, a close friend of Mekhitar, and the pastor of St. Khach Armenian Church, the spiritual leader of Armenians, in Venice.